Երկրորդը՝ « Ցաղագս առաքինութեանց հոգւոյ»։

Երրորդը՝ «Ցաղագս համառօտ հաւաքումն հրեշտակաց։»

Վերջը գրուած՝ « Ցաւարտ հասեալ սուիեստս հոգեաց լատինաբան ի Վրդանէս անուամբ յունայն հոգւով անարժան։ ձեռ աղաչեմ հանդիպող սորա զիս յիշեա և ասա տր։ ողորմայ։»

№ 72

Սկզբի քանի թերթերն ընկած՝ քառածալի դիրքով։ նոտր և շատ մանր և գեղեցիկ գրուած։ բառերն մեծ մասամբ պատիւով գրուած։ որով դժուարընթեռնելի է։ կսկսի « Գրիգորի եռամեծի և Քաջ Հռետորին և անյաղթ փիլիսոփայի։ աշակերտի Յովհաննու մեծի վարդապետի մակ անուն Կախկայ որեր կախեալ ի բանին Աստուծոյ։ Արարեալ բան քարոզութեան»։

Գրքիս կիսուն վերայ բաց թողուած յիշատակարանի տեղ մի նոր գրուած՝ որ է « Այս քարոզգիրք Վանեցի Եղիազար վարդապետին է։ և ես ծառայ նորին Գաբրիէլ կարգացի։ հասայ այս տեղ 1855 մայիսի 12 »։

Գրքիս վերջն « Յոհաննու աղօթք այս է։ Հայր սուրբ ուսո մեզ զբանս քո։ որդի սուրբ։ ցոյց մեզ զերեսս քո։ Հոգի սր։ սրբութեամբ քո սրբեա զմեզ։ Եւ Եփրեմի ներբողեանն այլ զայս ցոյց տայ։ թէ դահիճն ետես ի բանտին։ որ այսպէս աղօթէր։»

Գրքիս վերջն 7 էջէ բաղկացեալ տարբեր ձեռագրով մի ազգու քարոզ կայ «Քարոզ յաղագս ծննդեան Տեառն . . . . »

Մի այլ գիրք ևս տեսայ որ ունէր մի բառարան մինչև Գ տառը գրուած։ ուստի վերջն—« վիճակարան Ժ Մա Մատնատօմար»—

« Ասէ։ վասն կատարածի։ իսկ գիտելի է։ զի տարին յաւելու լուսին Ⓓ ի յընթացս արեգական ☉ Դ։ ժամս և զ։ զ։ մասն։ և լինի։ մասունք։ ի Կ։ ամին օր մի։ և յՃ ամին։ Է օր։ Զ։ Զ։ Ճ։ ամին։ Ԝ։ օր Ռ։ Բ։ Ճ։ ամին Ի։ օր և ՌԸՃ։ ամին ամիս մի։ և այսպէս լինի Է։ Ռ։ Բ։ Ճ։ ամին Դ։ ամիս լինի։